ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> << մարտի >> 2020թ. N ՄՊ/32-2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6՝ <<Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N 9 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Արմավիրի N 9 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2017, 2018, 2019 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/6/2020 19:01:25 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am